ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Խաչպար ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
6	Դիասեպտիկ 70, 750 մլ	Ինտերսեն պլյուս	«Դիասեպտիկ-70» մակերեսների արագ ախտահանման քառակոմպոնենտ միջոց է, իրենից ներկայացնում է թափանցիկ, համասեռ, ներկված կամ չներկված հեղուկի տեսքով, սպիրտի և/կամ բուրանյութի յուրահատուկ հոտով կիրառման համար պատրաստ լուծույթ՝ 750 մլ պարունակությամբ ֆլակոններում, որոնք ունեն ցողացրիչ հարմարանք: Պահպանման ժամկետը՝ 5 տարի: Որպես ազդող նյութեր՝ պարունակում է իզոպրոպիլ սպիրտ՝ 70,0%, ունդեցիլ ամիդոպրոպիլ տրիմոնիում մետոսուլֆատ՝ 0,23%, 2-ֆենօքսիէթանոլ՝ 0,30%, ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ՝ 0,10%, ինչպես նաև մաքրված ջուր և ֆունկցիոնալ բաղադրիչներ: Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ տուբերկուլոզի հարուցիչը՝ թեստավորված M.terrae-ի վրա, բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների (ԲՄՊՎ) հարուցիչները՝ թեստավորված P.aeruginosa-ի վրա), վիրուսների՝ ընդերային և արտաընդերային Ա, Բ, Ց, Դ հեպատիտների, ՄԻԱՎ հարուցիչների, ցիտոմեգալովիրուսի, հերպեսի վիրուսների, գրիպի

			վիրուսների (այդ թվում «թռչնի», «խոզի»), պարագրիպի, ադենովիրուսների, ռոտավիրուսների, նորովիրուսների, էնտերովիրուսային վարակների՝ պոլիոմիելիտի, Կոքսակի, ECHO, կորոնավիրուսների, «ատիպիկ թոքաբորբի» (SARS) վիրուսների, ՍԾՎՀ հարուցիչների, Կանդիդա ցեղի սնկերի, դերմատոֆիտների, բորբոսասնկերի նկատմամբ: <<Դիասեպտիկ -70>> մակերեսների արագ ախտահանման միջոցն օժտված է ախտահանիչ, ճարպազերծող և դեզոդորացնող հատկություններով, ազդեցությունը՝ սկսած 15 վայրկյանից մինչև 3 ժամ տևողությամբ: Միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, տարբեր ուղղվածության հիմնարկներում և հաստատություններում, այդ թվում նաև կենցաղում, որպես միջոց տարբեր օբյեկտների և ոչ մեծ մակերեսներով մակերևույթների արագ ախտահանման համար, այդ թվում՝ կոշտ և փափուկ գույքի, բժշկական, բարուրասեղանների, սեկցիոն սեղանների, կահավորանքի պարագաների, լուսավորող սարքավորումների և սարքերի, մանրէասպան լամպերի, բժշկական սարքերի և սարքավորումների մակերեսների (այդ թվում կուվեզների, արհեստական շնչառության սարքերի, անեսթեզիոլոգիական սարքերի, օպտիկական սարքերի, մամոգրաֆների, ֆոնենդոսկոպների, ախտորոշիչ սարքավորումների, այդ թվում ուլտրաձայնային հետազոտության (ՈՒՁՀ), տվիչների և գլխադիրների, կարդիոէլեկտրոդների), ֆիզիոթերապևտիկ սարքավորման, բարոխցերի, գինեկոլոգիական բազկաթոռների, բազկաթոռների գլխակալների և արմնկակալների, սայլակների, պատգարակների, հենակների, դռների և պատուհանների բռնակների, բազրիքների, անջատիչների, շերտավարագույրների, դեկորատիվ պանելների (էկրան), ջեռուցման համակարգի խողովակաշարերի արագ ախտահանման համար, բժշկական նշանակության արտադրատեսակների, այդ թվում ատամնաբուժական գլխադիրներ և ատամնաբուժական նյութեր (ատամնապրոթեզային կիսահումքեր, ալգինատային, սիլիկոնային, պոլիեթերային

			արտատպվածքներ), ախտահանման, մաքրման և դեզոդորացման համար: Տրանսպորտային միջոցների, այդ թվում շտապ և անետաձգելի բուժօգնության, սանիտարական տրանսպորտի, հանրային և բեռնատար տրանսպորտի արագ ախտահանման համար՝ սկսած 15 վայրկյանից: Մատակարարման պահին ապրանքի պիտանիության ժամկետի առնվազն 2/3-ի առկայություն: Վտանգավորության աստիճանը՝ 4-րդ դաս: Ունի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) և ՀՀ ԱՆ 28 օգոստոս 2020թ. հաստատված մեթոդական հրահանգ՝ թիվ 2936-Լ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Խաչպար ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
6			